ՌԱՀՀԿ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ
Մայիս 2004

«Իմ հայացքը Հայաստանի ապագային»
«Հայաստանի արտաքին քաղաքականությունը, կողմնորոշումները և վերաբերմունքը աշխարհի ուժային կենտրոնների նկատմամբ» թեմաներով

2004թ. ապրիլ-մայիս ամիսներին Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) նախաձեռնությամբ անց են կացվել փորձագիտական հարցումներ «Իմ հայացքը Հայաստանի ապագային» և «Հայաստանի արտաքին քաղաքականությունը, կողմնորոշումները և վերաբերմունքը աշխարհի ուժային կենտրոնների նկատմամբ» թեմաներով: Հարցմանը մասնակցել է 50 փորձագետ, որոնցից 30%-ը պետական և 70%-ը ոչ պետական հաստատություններից: Փորձագետների սեռային բաշխվածությունն է՝ 72%-ը արական և 28%-ը իգական սեռի ներկայացուցիչներ, իսկ տարիքային կազմը՝ 18%-ը՝ 20-30, 40%-ը՝ 31-40, 32%-ը՝ 41-50, 6%-ը՝ 51-60 և 4%-ը՝ 61-70 տարեկանի միջակայքում: Նրանց 98%-ն ունի բարձրագույն, իսկ 2%-ը՝ թերի բարձրագույն կրթություն: Հարցվածների 2%-ը գիտությունների դոկտոր է, 32%-ը՝ գիտությունների թեկնածու, 60%-ը՝ մագիստրոս, 6%-ը՝ բակալավր:

«Իմ հայացքը Հայաստանի ապագային» թեմայով հարցված փորձագետների 16%-ը լիովին գոհ է առկա իրականությունից, ընթացող բարեփոխումներից և աջակցում է դրանց, մինչդեռ 10%-ը համակերպվում է, բայց գոհ չէ, իսկ 70%-ն անհաշտ է դրանց հետ և պայքարում է: 4%-ն իրեն անտարբեր է որակել: Փորձագետների 14%-ը գտնում է, որ ամեն ինչ փոխելու, 80%-ը՝ ինչ-որ բան փոխելու ունակ է: Իսկ 6%-ը գտնում է, որ ունակ չէ ոչինչ փոխելու:

Հարցվածների 50%-ն իրեն համարել է շատ լավ տեղեկացված, միաժամանակ քաղաքականապես ակտիվ ու քաղաքականության վրա ներազդող, 46%-ը՝ շատ տեղեկացված, բազմաթիվ հարցերի վերաբերյալ կարծիք ունեցող, բայց սեփական տեսակետների հաղթանակի համար չպայքարող: Միայն 4%-ն է իրեն պասիվ որակել: Սոցիալական փոփոխությունների առումով հարցվածների 80%-ը հասարակության, պետության խորքային և համակարգային փոփոխության, իսկ 20%-ը՝ առնվազն հնարավորինը փոխելու կողմնակից է: Հայաստանի տնտեսական համակարգի նկատմամբ նրանց 16%-ի գնահատականը ծայրահեղ բացասական, 54%-ինը՝ բացասական և 30%-ինը՝ վերապահումով դրական է:

Հարցվածները 100% դրական վերաբերմունք ունեն միայն շահույթ և մրցակցություն կատեգորիաների նկատմամբ: Մինչդեռ գերշահույթ և արտոնություն կատեգորիաներին հարցվածների 30%-ը դրականորեն, իսկ 70%-ը բացասականորեն է վերաբերվում: Մրցակցության ու մասնակցության հավասար պայմաններ և ազատականություն կատեգորիաները հարցվածների 96%-ի համար դրական, իսկ 4%-ի համար բացասական են: Մենաշնորհին 16%-ը դրականորեն, իսկ 84%-ը բացասականորեն է վերաբերվում: 90-ական տոկոսը դրական է վերաբերվում, որ աշխատողները մասնակցություն ունենան կազմակերպությունների, ձեռնարկությունների կառավարմանը, նաև արհմիությունների գործունեությանը, իսկ 10-ական տոկոսը բացասական է վերաբերվում թվարկվածներին: 14%-ը դրական, իսկ 86%-ը՝ բացասական է վերաբերվում ձեռնարկությունների վարչահրամայական ոճով կառավարմանը: Ընդհանուր առմամբ կապիտալիզմ կատեգորիան 72%-ի դրական, 28%-ի բացասական և սոցիալիզմը 70%-ի դրական, իսկ 30%-ի բացասական վերաբերմունքին են արժանացել:

Հարցվածների 4%-ն իրեն նույնականացրել է իբրև ձախ, 30%-ական տոկոսը՝ իբրև ձախակենտրոն, աջակենտրոն և աջ, իսկ 6%-ը ծայրահեղ աջ գաղափարախոսական հոսանքներին հարող: 60%-ը Հայաստանի զարգացումը հնարավոր է համարել ազատական-ժողովրդավարության, 20%-ը՝ սոցիալ-ժողովրդավարութան, իսկ 20%-ը՝ ազգային-ժողովրդավարության պայմաններում:

Հարցվածներն իրենց վերաբերմունքն են արտահայտել նաև Հայաստանում առկա տարբեր խնդիրների վերաբերյալ: Որպես առաջիկայում Հայաստանի համար ամենահրատապ խնդիր 18-ական տոկոսը համարում է տարածաշրջանային համագործակցությունը և ժողովրդավարության հաստատումը (վերջինիս հետ ուղղակիորեն կապված է «այլ» պատասխանի ներքո մասնավորեցված «սահմանադրական կարգի վերականգնում» ձևակերպումը՝ 2% և նրա հետ կազմում է 20%), 16%-ը նշել է ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը, 10-ական տոկոսը՝ ՀՀ արտաքին քաղաքականության վերանայումը և երկրի ներսում կարգուկանոնի հաստատումը, 8-ական տոկոսը՝ բանակի հզորության ու մարտունակության բարձրացումը և ներքին կայունության պահպանումը: Կոռուպցիայի դեմ պայքարը հրատապ է որակել 6%-ը, աշխատատեղերի ստեղծումը՝ 4%-ը: Երկարաժամկետ կտրվածքով (10 տարի) փորձագետները ամենաառաջնահերթ խնդիր են համարել քաղաքական կյանքի ժողովրդավարացումը և անվտանգության համակարգի ձևավորումը՝ 18-ական տոկոս, հասարակության գիտակցության բարձրացումը՝ 12%, ղարաբաղյան խնդիրը՝ 4% («այլ» պատասխանի ներքո): Երկրի տնտեսական զարգացումն ու կենսամակարդակի բարձրացումը առաջնահերթ է համարել 20%-ը, իսկ ամենաբարձր ցուցանիշն է ստացել մարդու իրավունքների և ազատությունների ապահովումը՝ 28%:

Հեռու և մոտ անցյալից ժառանգված խնդիրների առումով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը լուծելի է համարում 52%-ը, անլուծելի՝ 48%-ը, հայկական պատմական տարածքների հողահավաքը լուծելի է համարում 6%-ը, անլուծելի՝ 94%-ը, արցախյան խնդրի կարգավորումը լուծելի է համարում 56%-ը, անլուծելի՝ 44%-ը, արտագաղթի կասեցումը լուծելի է համարում 68%-ը, անլուծելի՝ 32%-ը, աղքատության հաղթահարումը լուծելի է համարում 52%-ը, անլուծելի՝ 48%-ը: Կոռուպցիայի դեմ պայքարի հաջողությանը հավատում է հարցվածների միմիայն 6%-ը, մինչդեռ 94%-ը չի հավատում:

Առկա խնդիրների չլուծվածության պատճառ հարցվածների 12-ական տոկոսը համարում է հավասարապես իշխանությունների ու հասարակության անտարբերությունը և անհետևողականությունը, 10-ական տոկոսը՝ խնդիրներին մասնակի, բայց ոչ ամբողջական լուծում տալը և իշխանությունների ոչ արհեստավարժությունը: 2-ական տոկոսը առաջնային պատճառներ է որակել միջազգային հանրույթի դերակատարների խոչընդոտումը, Հայաստանի պաշարամիջոցների անբավարարությունը, քաղաքական անհրաժեշտ միջավայրի բացակայությունը: 6-ական տոկոսը կարծում է, որ խնդիրները չեն լուծվում, քանի որ ընդունված է դրանք լուծել, երբ արդեն «դանակը հասել է ոսկորին», նաև այն պատճառով, որ քաղաքացիական հասարակության ինստիտուտները դրանք ժամանակին ու պատշաճ չեն ներկայացնում իշխանութուններին և վերջապես՝ իշխանություններին ցուցաբերվող հանրային աջակցությունը անբավարար է կամ իսպառ բացակայում է: Հարցվածների ամենամեծ՝ 24%-ը, հիմնական պատճառ է տեսնում իշխանությունների՝ քաղաքական բավարար կամքի բացակայությունը:

Հարցվածների կրկին ամենամեծ՝ 24%-ը, այսօր վախենում է իշխանությունների կամայականություններից, 18%-ը՝ անորոշությունից, 12%-ը՝ Թուրքիայի, իսկ 6%-ը՝ Ադրբեջանի դեմ պատերազմից: 6-ական տոկոս վախենում է Ռուսաստանի հետ հարաբերությունների հետագա սերտացումից, աղքատությունից, մերձավորներին կորցնելուց, Աստծո զայրույթից ու Ահեղ դատաստանից, 4-ական տոկոսը՝ ֆիզիկական բռնությունից, մահից: 2%-ը «այլ»

պատասխանի ներքո մտահոգություն է հայտնել, որ անհրաժեշտություն կունենա պաշտպանել գործող իշխանություններին, իսկ 6%-ը ոչինչից չի վախենում:

Փորձագետների 40%-ը գտնում է, որ Հայաստանի ամենամեծ ներուժը մարդկայինն է, 18%-ը՝ ժողովուրդը, 16%-ը՝ աշխարհագրական դիրքն ու աշխարհաքաղաքական կարևորությունը, 14%-ը՝ Սփյուռքը, 8%-ը՝ մշակութային ժառանգությունը: Իսկ 4%-ի կարծիքով թվարկվածներից որևէ մեկը ներուժ չէ: Այդ թվում զրոյական են գնահատվել Հայաստանի տնտեսական կարողությունը, ընդերքի պաշարները, տարածքի ու բնության գրավչությունը: 10 տարի անց փորձագետները Հայաստանի պաշարամիջոցներից ավելացած ու բազմապատկված են տեսնում. տարածքը՝ 4%-ը, քաղաքական և աշխարհաքաղաքական վարկը՝ 8%-ը, տնտեսական ներուժը՝ 18%-ը, մարդկային ներուժը՝ 20%-ը, մշակութային հարստությունը՝ 4%-ը, քաղաքական հասունությունը՝ 38%-ը և որևէ ռեսուրսի ավելացում չի տեսնում 8%-ը:

Սեփական շահերն առաջադրելու և հետամտելու տեսանկյունից հարցվածների 14%-ն է միայն Հայաստանը լիովին ազատ համարում: Նրանց 50%-ը Հայաստանը մասնակի ազատ կամ անազատ, իսկ 36%-ը անազատ է համարում: Միաժամանակ, հարցվածների 86%-ը կարծում է, որ Հայաստանը չի ձևակերպում իր իդեալ-կողմնորոշիչները և շարժվում է տարերայնորեն, իսկ 14%-ն էլ համարում է, որ դրանք պարտադրվում են դրսից:

Հարցվածների 50%-ի կանխատեսմամբ Հայաստանը 10 տարի անց կլինի միջակ պետություն, 46%-ի կանխատեսմամբ՝ թույլ պետություն և միայն 4%-ն է հզոր Հայաստան տեսնում: Հայաստանի՝ ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական ու սոցիալական պետություն լինելու հեռանկարը այսօր վտանգված է տեսնում 80%-ը, իսկ 20%-ը՝ վտանգված չի համարում: Դրա պատճառների թվարկման ներքո 44%-ը համամիտ է, որ այսօր երկիրն ապրում է բացառապես անցյալով կամ լավագույն դեպքում՝ ներկայով, իսկ ապագայի մասին մտածող չկա, 26%-ը համամիտ է, որ ապագան այսօր չի էլ ծրագրվում, 18%-ը պատճառ է տեսնում ապագայի մարտահրավերների դժվարհաղթահարելիությունը և 6%-ը՝ դեռևս անցալից այդ իդեալների վտանգվածությունը:

Փորձագետների 74%-ը գտնում է, որ Հայաստանը հաղթահարելու է ներկայի բոլոր դժվարությունները, իսկ 26%-ը գտնում է, որ չի հաղթահարելու: Նրանց 36%-ի կարծիքով Հայաստանի ժողովրդի մեծամասնությունը հավատում է իր պետության ապագային, իսկ 64%-ի կարծիքով՝ չի հավատում: Փորձագետների 28%-ի կարծիքով երկրի անհաջողության դեպքում հիմնական պատճառաբանությունը, որ բերում է ժողովուրդը, այն է, որ իրեն դժվար ճակատագիր ու թշնամի հարևաններ են բաժին ընկել, 24%-ի կարծիքով այն է, որ հույսն անիմաստ կապել է ուրիշի հետ: 20%-ի կարծիքով ժողովուրդը մտածում է, որ ինքնուրույնաբար ի զորու չէ իր խնդիրները լուծել: 12%-ը կարծում է, որ այդ իրավիճակում ժողովուրդն անազնիվ է որակում աշխարհին ու իր գործընկերներին, որոնք հետամտում են բացառապես սեփական շահերը, 10%-ի կարծիքով ժողովուրդը բերում է իր միայնակ լինելու ու հուսալի գործընկերներ չունենալու պատճառաբանությունը: 4%-ի կարծիքով ժողովուրդն իրեն մեղադրում է հնարավորությունները գերագնահատելու և սեփական ուժերի հանդեպ չարդարացված վստահություն ունենալու համար: 2%-ը չընդունելով թվարկվածներից որևէ մեկը՝ նշել է «այլ» տարբերակ, չձևակերպելով այն:

«Հայաստանի արտաքին քաղաքականությունը, կողմնորոշումները և վերաբերմունքը աշխարհի ուժային կենտրոնների նկատմամբ» թեմայով հարցված փորձագետների 56%-ը համարում է, որ Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) առջև ստանձնած մեր պարտավորություններից ամենակարևորը մարդու իրավունքների պաշտպանության՝ այդ թվում խոսքի, խղճի, հավաքների և մամուլի ազատություններն են, իսկ 34%-ը՝

սահմանադրական բարեփոխումները և ընդամենը 6%-ը դատաիրավական դաշտի բարեփոխումները: Ինչ վերաբերում է Հայաստանում այդ պարտավորությունների կատարման ընթացքի գնահատականին՝ ճնշող մեծամասնությունը՝ 82 %-ը, գտնում է անբավարար, ընդ որում «գերազանց», «լավ», «բավարար» և «անբավարար» գնահատման սանդղակում: Այնուհանդերձ ռեսպոնդենտների ուղիղ կեսը՝ 50%-ը, գտնում է, որ պարտավորությունների աստիճանական իրականացումը «մասամբ դրական» անդրադարձ ունի մեր հասարակության արդի վիճակի ու գործելակերպի վրա: Եվ միայն 6%-ն է համարում, որ դրանք «մասամբ բացասական» անդրադարձ ունեն, իսկ 16%-ը՝ ոչ մի ազդեցություն:

Այսօր Հայաստանում քննարկվող հրատապ խնդիրներից՝ մարդու իրավունքների ոտնահարման ամենակոպիտ ու տարածված տեսակ է համարվում իշխանավորների և պաշտոնյաների կամայականությունները՝ ըստ 56%-ի, որին անմիջապես հաջորդում է արժանապատիվ ապրելու հնարավորությունից զրկված լինելը՝ ըստ 34%-ի:

Հարցված փորձագետների 18%-ը գտնում է, որ հասարակության զարգացմանն ու մեր կենսամակարդակի աճին խոչընդոտում է գործադիր իշխանությունը, մյուս 18%-ը՝ օրինազանցությունները, իսկ 16%-ը՝ ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման գործընթացի ձգձգումը: Հետաքրքրական է, որ ընդամենը 12%-ն է այդպիսիք համարում կոռուպցիան և մյուս 12%-ը՝ կլանների և օլիգարխների գոյությունը:

Այն հարցին, թե որ պետությունը կամ միջազգային որ կառույցն է մի դեպքում սահմանափակում, իսկ մյուս դեպքում նպաստում մեր անկախությանն ու պետականության շինարարությանը՝ առաջինի պարագայում 56%-ը համարում է, որ դա Ռուսաստանի Դաշնությունն է և 12%-ը՝ Հայաստանն իր կառավարությամբ: Իսկ Ամերիկայի Միացյալ Նահանգները և Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) կառուցվածքում մեր ընդգրկվածությունը՝ 6-ական տոկոս: Հետաքրքիր է, որ 10%-ի կարծիքով ոչ մեկը չի խոչընդոտում մեր անկախությանն ու պետականությանը: Ինչ վերաբերում է նպաստող պետություններին և միջազգային կառույցներին՝ պատկերը հետևյալն է. 72%-ը գտնում է, որ ԵԽԽՎ-ը և Եվրամիությունը նպաստում են, 22%-ը՝ ոչ մեկը չի նպաստում: ԱՄՆ-ին տրվել է 6% և ոչ ոք չի համարում, որ ՌԴ-ն որևէ կերպ նպաստում է մեր անկախության ու պետականության ամրապնդմանը:

Վերջին շրջանում լայն քննարկման առարկա ՀՀ անվտանգության համակարգի և նրա հետագա հուսալիության հարցերը նույնպես տեղ են գտել հարցաթերթում, և պատկերը հետևյալն է: Ռեսպոնդենտների 66%-ը գտնում է, որ առաջիկա 10-12 տարիներին Հայաստանը պետք է անդամակցի ՆԱՏՕ-ի ռազմաքաղաքական դաշինքին, 28%-ը գտնում է, որ ոչ, և միայն 6%-ն է դժվարացել պատասխանել: Ինչ վերաբերում է այս համատեքստում ՌԴ ռազմական հենակետի ներկայությանը՝ որպես տարածաշրջանում մեր անվտանգության հիմնական երաշխիքի, ապա այդպես է գտնում փորձագետների ընդամենը 18%-ը, իսկ 76%-ը համարում է, որ այն հիմնական երաշխիք չէ, և 6 %-ը դժվարացել է պատասխանել:

Հարցվածների 72%-ը պատասխանել է «ոչ» այն հարցին, թե Հայաստանին ԱՄՆ կառավարության ֆինանսական և հումանիտար օգնության ծավալների փոփոխությունը արդյո՞ք որևէ կերպ անդրադառնում է նրանց ընտանիքների բարեկեցության վրա: Եվ 22%-ը պատասխանել է դրական: 6%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին:

Հարցաթերթի վերջին հարցը, որը վերաբերում է բավականին չարչրկվող Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների բարելավմանն ու սահմանային անցակետերի վերաբացմանը, 50%-ը համարում է հրատապ և ոչ հրատապ՝ 40%-ը: Մնացած 10%-ը դժվարացել է պատասխանել:

© 2004թ., Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն